

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2021 թվականի  
մայիսի 27-ի N 861 - Ն որոշման

«Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
ապրիլի 30-ի N 718 - Ն որոշման

**ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ  
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

**Ստուգաթերթ N 4.2**

**Մշակող արդյունաբերության ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններում աշխատողների առողջության  
պահպանման և անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ վերահսկողության  
(ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ Շ)**

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը,

հեռախոսահամարը, գտնվելու վայրը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

ազգանունը, անունը, հայրանունը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ 20\_\_թ. \_\_\_\_\_ ավարտը՝ 20\_\_թ. \_\_\_\_\_

\_\_\_\_\_

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

\_\_\_\_\_ Հ Վ Հ Հ \_\_\_\_\_

Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները \_\_\_\_\_ (հեռախոսահամարը)

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը \_\_\_\_\_ (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝ \_\_\_\_\_ տրված՝ \_\_\_\_\_ 20\_\_թ.

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ \_\_\_\_\_

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

Ը/Ը	Հարցը	Պատասխան
1.	Գործունեության հասցեն (հասցեները)	
	Գործունեության ոլորտը (ները)	
2.	Փաստացի աշխատողների թիվը	

3.	Իգական սեռի աշխատողների թիվը	
4.	Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում կազմակերպությունում տեղի է ունեցել դժբախտ դեպք (թունավորում)	
5.	Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում մինչև 18 տարեկան աշխատողների առկայությունը	
6.	Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողների առկայությունը	

### ՀԱՐՑԱՇԱԲ

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից «Մշակող արդյունաբերություն» ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ իրականացվող ստուգումների

Հ/Հ	Հարց	Հղում նորմատիվ իրավական ակտին	Այո	Ոչ	Չ/Պ	Կշիռ	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Պահպանվել են աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության պահանջները՝ աշխատավայրը կահավորելիս:	ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 245, մաս 1, հոդված 251, մաս 2						
1.1	Արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոնների առկայության պայմաններում աշխատողներն ապահովված են փակվող դռներով երկտեղանոց հանդերձապահարաններով:	Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրաման, հավելված, կետ 11-ի 2-րդ ենթակետ				1	Տեսողական	
1.2	Արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոնների առկայության պայմաններում աշխատողներն ապահովված են՝	Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրաման, հավելված, կետ 13						
1.2.1	յուրաքանչյուր 7 մարդուն մեկ ցնցուղ հաշվարկով ցնցուղարանով.					0,5	Տեսողական	
1.2.2	իրականացվում է ցնցուղարանի բնական օդափոխություն:					0,5	Տեսողական	
1.3	Սառեցնող կամ տաքացնող միկրոկլիմայով աշխատատեղերում, ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության	Առողջապահության նախարարի 2012						

	գործոնների առկայության պայմաններում աշխատողներն ապահովված են հանգստի սենյակներով՝ կահավորված՝	թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրաման, հավելվածի կետ 22, կետ 23						
1.3.1	լվացարաններով.					0,2	Տեսողական	
1.3.2	խմելու ջրով.					0,2	Տեսողական	
1.3.3	տաքացման և (կամ) հովացման սարքավորումներով:					0,2	Տեսողական	
2.	Պահպանվել են աշխատանքում միայն տեխնիկապես սարքին վիճակում գտնվող աշխատանքի միջոցներ օգտագործելու և սարքավորումների անվտանգ շահագործման ապահովման պահանջները:	ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 246, մասեր 1, 5						
2.1	Յուրաքանչյուր մեքենա կամ մեխանիզմ սարքավորված է մեքենան լիովին անվտանգ կանգնեցնելու կառավարման միջոցով:	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 19				1	Տեսողական, փաստաթղթային	
2.2	Մեքենաների կամ մեխանիզմների շարժական գի կառավարման միջոցներն ունեն գերակայություն գործարկման միջոցների նկատմամբ:	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 19				1	Տեսողական, փաստաթղթային	
2.3	Շարժական գի միջոցի կապագերծումը (սեղման արգելակում) չի հանգեցնում մեքենայի ավտոմատ միացմանը, այլ հնարավոր է դարձնում կրկնակի գործարկումը:	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 20				1	Տեսողական, փաստաթղթային	
2.4	Ընկնող կամ դուրս նետվող առարկաներից առաջացող ռիսկերի տեսանկյունից ձեռնարկված են նախագգուշական միջոցներ՝ մեքենաներից և մեխանիզմներից ընկնող կամ դուրս նետվող առարկաներից առաջացող ռիսկերը կանխելու համար	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 28				1	Տեսողական, փաստաթղթային	

	(նախապատրաստվածքներ, գործիք, տաշեղներ, մասնիկներ, մնացուկներ և այլն):							
2.5	Շարժվող մասերի (փոխհաղորդակի շարժվող մասեր՝ փոկանիվ, փոկեր, ժանանիվներ, ձողավոր փոխանցիչներ, իլեր, աշխատանքին մասնակցող շարժվող մասեր՝ կտրող գործիք, մամլիչների, գլանների շարժվող մասեր, մշակվող մասեր և այլն) առկայությամբ պայմանավորված հնարավոր ռիսկերի կանխման, դրանց ներգործությանը ենթարկվող անձանց պաշտպանության համար մեքենաների կամ մեխանիզմների շարժվող մասերն ապահովված են կանխիչ կամ պաշտպանական միջոցներով: <b>Նշում 1*</b>	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 32, կետ 33, կետ 34, կետ 35, կետ 36, կետ 37, կետ 38				1	Տեսողական, փաստաթղթային	
2.6	Մեքենաները և մեխանիզմները, որոնց կառուցվածքում իրագործված չէ վտանգավոր էլեկտրական լիցքի կուտակման սահմանափակում կամ բացառում, հանդերձված են հողակցման համակարգով:	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 40				1	Տեսողական, փաստաթղթային	
2.7	Բոլոր մեքենաները և մեխանիզմները սարքավորված են էներգիայի բոլոր աղբյուրներից հստակ նույնականացված մեկուսացման միջոցներով (անջատիչներով):	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 57				1	Տեսողական, փաստաթղթային	
2.8	Էներգիայի աղբյուրից մեքենաների և մեխանիզմների մեկուսիչները (անջատիչները), որոնց փոխանջատումը կարող է վտանգի ենթարկել ներգործության գոտում գտնվող աշխատողներին, գտնվում են փակի տակ:	ՀՀ ԿՈ 15.12.2005 թ. N 2390-Ն, կետ 57				1	Տեսողական, փաստաթղթային	
2.9	Կազմակերպությունում առկա են շահագործվող բոլոր մեքենաների և մեխանիզմների շահագործման հրահանգները՝ հայերեն:	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 65				1	Տեսողական, փաստաթղթային	
2.10	Շահագործման հրահանգով սահմանված են՝							

2.10.1	մեքենաների և մեխանիզմների օգտագործման չթույլատրվող գործողությունների վերաբերյալ ցուցումներ,	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 64				0,5	Փաստաթղթային	
2.10.2	անհրաժեշտ ցուցումներ անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 66				0,5	Փաստաթղթային	
2.10.3	անվտանգ շահագործման համար անհրաժեշտ ստուգումների և ընթացիկ սպասարկման եղանակն ու հաճախականությունը:	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 27				0,5	Փաստաթղթային	
2.11	Գործատուն իրականացնում է մեքենաների և մեխանիզմների անվտանգ շահագործման համար անհրաժեշտ ստուգումներ և ընթացիկ սպասարկում շահագործման հրահանգով սահմանված եղանակներով և հաճախականությամբ:	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 27				1	Տեսողական, փաստաթղթային	
2.12	Հեռակառավարմամբ մեքենաները կամ մեխանիզմները, որոնք շահագործման բնականոն պայմաններում կարող են ներգործության գոտում գտնվող անձանց ռիսկի ենթարկել, ինչպես նաև մեքենաները և մեխանիզմները, որոնք շահագործման ժամանակ նույն առանցքով կատարում են մշտապես կրկնվող առաջընթաց և հետընթաց շարժումներ, և որտեղ մեքենաների հետևի մասերը մեքենավարին լավ տեսանելի չեն, սարքավորված են իրենց շարժումն ազդանշանող համապատասխան միջոցներով կամ այնպիսի միջոցներով, որոնք թույլ են տալիս ներգործության գոտում գտնվող անձանց պաշտպանել այդպիսի ռիսկերից:	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 100				1	Տեսողական, փաստաթղթային	

2.13	Այն մեքենաների և մեխանիզմների կամ գործիքների վրա, որոնց շարժումն առավել վտանգավոր է, տեղակայված են ազդասարքեր, որոնք նախագգուշացնում են աշխատանքի ժամանակ մեքենային, մեխանիզմին կամ գործիքին մոտենալու վտանգավորության մասին և ապահովում մոտակայքում հարկադրաբար գտնվող անձանց անվտանգությունը:	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշում, կետ 100				1	Տեսողական, փաստաթղթային	
3.	Գործատուն ապահովում է աշխատատեղերի լուսավորումը՝ նորմավորող ցուցանիշներին համապատասխան: <b>Նշում 2*</b>	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 244, կետ 5</b>  Առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի N 756-Ն հրաման, կետ 3.3				1	Տեսողական, գործիքաչափում	
4.	Աշխատանքային գոտու օդում վնասակարության բոլոր դասերին պատկանող քիմիական նյութերի և միացությունների՝ գազերի, գոլորշիների, անոթազրկների և փոշու անջատումով ընթացող տեխնոլոգիական գործընթացների ստորաբաժանումներն ապահովված են ներիոս և (կամ) արտաձիգ մեխանիկական օդափոխության համակարգերով:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 244, կետ 5</b>  Առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի N 756-Ն հրաման, կետ 3.2-ի 2-րդ ենթակետ				1	Տեսողական, փաստաթղթային	
5.	Կենդանական և բուսական ծագմամբ հումքի օգտագործմամբ, դրանցից առաջացող փոշու արտանետմամբ, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչների հետ շփմամբ կատարվող աշխատանքների ստորաբաժանումներն	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 244, կետ 5</b>  Առողջապահության նախարարի 2005				1	Տեսողական	



	ապահովված են ներհուս և (կամ) արտաձիգ մեխանիկական օդափոխության համակարգերով:	թվականի օգոստոսի 15-ի N 756-Ն հրաման, կետ 3.2 3-րդ ենթակետ						
6.	Քիմիական և կենսաբանական նյութերի գործածմամբ աշխատատեղերում, բացի ներհուս և (կամ) արտաձիգ մեխանիկական օդափոխության համակարգից, բաց տեխնոլոգիական գործընթաց իրականացնող սարքեր-սարքավորումներն ապահովված են տեղային արտաձիգ օդափոխության համակարգով:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 244, կետ 5</b>  Առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի N 756-Ն հրաման, կետ 3.2-ի 4-րդ ենթակետ				1	Տեսողական	
7.	Աշխատատեղում աղմուկի մակարդակը համապատասխանում է սահմանային թույլատրելի մակարդակներին (ՄԹՄ):	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 244, կետ 5</b>  Առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի N 756-Ն հրաման, կետ 9.1, Առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 6-ի N 138 հրաման, կետ 4.3				1	Փաստաթղթային, գործիքաչափում	
8.	Աշխատատեղերում թրթռման (վիբրացիայի) մակարդակը համապատասխանում է սահմանային թույլատրելի մակարդակներին (ՄԹՄ):	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 244, կետ 5</b>				1	Փաստաթղթային, գործիքաչափում	

		Առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի N 756-Ն հրաման, կետ 10.1, Առողջապահության նախարարի 2006 թվականի մայիսի 17-ի N 533 հրաման						
9.	Արտադրական սենքերի աշխատատեղերում միկրոկլինայի ցուցանիշները համապատասխանում են թույլատրելի նորմերին: <b>Նշում 3*</b>	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 244, կետ 5</b>  Առողջապահության նախարարի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի N 842-Ն հրաման, կետ 5.2, կետ 5.5				1	Փաստաթղթային, գործիքաչափում	
10.	Աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի պարունակությունը համապատասխանում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներին:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 244, կետ 5</b>  Առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի N 27-Ն հրաման, հավելված, աղյուսակ 1-5				1,5	Փաստաթղթային, գործիքաչափում	

11.	Աշխատանքային գոտու օդում փոշու պարունակությունը համապատասխանում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներին:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 244, կետ 5</b>  Առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի N 27-Ն հրաման, հավելված, աղյուսակ 1-5				1,5	Տեսողական, փաստաթղթային, գործիքաչափում	
12.	Արտադրական սենքերը և պահեստարանները սարքավորված են աշխատանքային գոտու՝ օդում ուժեղ ազդող թունավոր նյութերի առկայության մասին ազդանշանման ավտոմատ համակարգով: <b>Նշում 4*</b>	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 247, մաս 3</b>  Առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի N 756-Ն հրաման, կետ 3.4				1	Տեսողական, փաստաթղթային, գործիքաչափում	
13.	Գործատուն ընդունել է աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտեր:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 248, մաս 3, հոդված 247, մաս 3</b>				1	Փաստաթղթային	
14.	Գործատուն ապահովում է աշխատողների աշխատանքի անվտանգ կատարման ուսուցումը և (կամ) հրահանգավորումը:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 254, մաս 1, հոդված 247, մաս 3</b>				1	Տեսողական, փաստաթղթային	
15.	Գործատուն ապահովում է կազմակերպությունում առկա հնարավոր ռիսկի գործոնների մասին կազմակերպությունում գործուղված և աշխատանքներ իրականացնող աշխատողի տեղեկացումը և աշխատանքի որոշակի վայրում հրահանգավորումը:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 254, մաս 2</b>				0,5	Տեսողական, փաստաթղթային	

16.	Կազմակերպությունում աշխատողների անվտանգության վիճակի և աշխատանքի պայմանների գնահատման հիման վրա գործատուն աշխատավայրը (աշխատատեղը) կահավորել է կոլեկտիվ պաշտպանության միջոցներով:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 255, մաս 1, հոդված 247, մաս 3</b>				1,2	Տեսողական, փաստաթղթային	
17.	Կազմակերպությունում աշխատողների անվտանգության վիճակի և աշխատանքի պայմանների գնահատման հիման վրա գործատուն աշխատողներին տրամադրում է անհատական պաշտպանության միջոցներ՝ ըստ դրանց նշանակության, պաշտպանական, բժշկահիգիենիկ և օգտագործման ցուցանիշների: <b>Նշում 5*</b>	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 255, հոդված 247 մաս 3</b>  Առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի N 756-Ն հրաման, հավելված, կետ 4.1.3, ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1631-Ն որոշում, հավելված, կետեր 9, 29, 30				1,5	Տեսողական, փաստաթղթային	
18.	Գործատուն ներքին կարգապահական կանոններով կամ աշխատանքային պայմանագրով սահմանել է աշխատանքի ռեժիմը և հանգստի ժամանակը:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 5, մասեր 2-4, հոդված 84, մաս 1, 11-12 կետեր, հոդված 142, մասեր 1-4, հոդված 218, մաս 2</b>				1	Փաստաթղթային	
19.	Պահպանվել է մինչև 18 տարեկան անձանց, հաշմանդամների, հղիների կամ երեխա խնամող աշխատողների, ինչպես նաև առողջության համար վնասակար և (կամ) վտանգավոր գործոնների	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 139, մաս 2</b>				1	Տեսողական, փաստաթղթային	

	ազդեցության պայմաններում աշխատողների ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը:							
20.	Պահպանվել է տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների աշխատաժամանակի կրճատ տևողությունը՝ շաբաթական մինչև 24 ժամ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 140, մաս 1, կետ 4</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
21.	Պահպանվել է տասնվեցից մինչև տասնութ տարեկան աշխատողների աշխատաժամանակի կրճատ տևողությունը՝ շաբաթական մինչև 36 ժամ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 140, մաս 1, կետ 5</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
22.	Պահպանվել է ոչ ավելի, քան շաբաթական 36 ժամ աշխատաժամանակի կրճատ տևողությունն այն աշխատողների համար, որոնց աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել առողջության համար անվտանգ մակարդակի	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 140, մաս 1, կետ 6</b>				1	Տեսողական, փաստաթղթային	
23.	Պահպանվել է 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող աշխատողների համար աշխատաժամերի կրճատված տևողությունը՝ ոչ ավելի, քան շաբաթական 36 ժամ:	«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 19				0,2	Տեսողական, փաստաթղթային	
24.	Աշխատողի պահանջով՝ կապված նրա առողջական վիճակի հետ, բժշկական եզրակացության հիման վրա սահմանվել է ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 141, մաս 1, կետ 2, մաս 2</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
25.	Հղի կնոջ և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով սահմանվել է ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 141, մաս 1, կետ 3</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
26.	Հաշմանդամի պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա սահմանվել է ոչ լրիվ	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	

	աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ:	<b>141, մաս 1, կետ 4, մաս 2</b>						
27.	Մինչև 18 տարեկան աշխատողների նկատմամբ չի կիրառվում աշխատաժամանակի գումարային հաշվարկ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 143, մաս 1.1</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
28.	Մինչև 16 տարեկան աշխատողները չեն ներգրավվում՝							
28.1	ակոհոլային խմիչքների արտադրության, օգտագործման կամ իրացման աշխատանքներում.	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 17, մաս 2.1</b>  «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 19				0,2	Տեսողական, փաստաթղթային	
28.2	թմրամիջոցների և հոգեմետ նյութերի արտադրության, օգտագործման կամ իրացման աշխատանքներում.	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 17, մաս 2.1,</b> «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 19				0,2	Տեսողական, փաստաթղթային	
28.3	ծխախոտի արտադրության, օգտագործման կամ իրացման աշխատանքներում.	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 17, մաս 2.1</b>  «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 19				0,2	Տեսողական, փաստաթղթային	
28.4	Էրոտիկա և սարսափ բովանդակող գրականության և տեսաերիզների արտադրության, օգտագործման կամ իրացման աշխատանքներում.	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 17, մաս 2.1</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	

		«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 19						
28.5	կրթություն ստանալուն խոչընդոտող աշխատանքներում:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 17, մաս 2.1</b>  «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 19				0,2	Տեսողական, փաստաթղթային	
29.	Մինչև 18 տարեկան աշխատողները չեն ներգրավվում արտաժամյա աշխատանքում:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 144, մաս 3, կետ 1</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
30.	Առողջության համար վնասակար և (կամ) վտանգավոր գործոնների ազդեցության պայմաններում աշխատողները չեն ներգրավվում արտաժամյա աշխատանքում:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 144, մաս 3, կետ 3</b>				1	Տեսողական, փաստաթղթային	
31.	Հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները ներգրավվում են արտաժամյա աշխատանքում՝ միայն իրենց համաձայնությամբ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 144, մաս 4, հոդված 145</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
32.	Հաշմանդամություն ունեցող աշխատողը ներգրավվում է արտաժամյա աշխատանքում՝ արտաժամյա աշխատանքն արգելված չլինելու վերաբերյալ բժշկական եզրակացության առկայության դեպքում:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 144, մաս 4, հոդված 145</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
33.	Մինչև 18 տարեկան աշխատողները չեն ներգրավվում գիշերային աշխատանքում:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 148, մաս 3</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	

34.	Աշխատողները, որոնց գիշերային աշխատանքն արգելված է բժշկական եզրակացությամբ ներգրավված չեն գիշերային աշխատանքում:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 148, մաս 3</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
35.	Հղի կանայք կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողը գիշերային աշխատանքում ներգրավվում են միայն իրենց համաձայնությամբ՝ նախնական բժշկական զննություն անցնելուց և գործատուին բժշկական եզրակացություն ներկայացնելուց հետո:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 148, մաս 4</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
36.	Հաշմանդամություն ունեցող աշխատողը ներգրավվում է գիշերային աշխատանքում՝ գիշերային աշխատանքն արգելված չլինելու վերաբերյալ բժշկական եզրակացության առկայության դեպքում:	«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 19				0,2	Տեսողական, փաստաթղթային	
37.	Մինչև 18 տարեկան աշխատողները տանը կամ կազմակերպությունում հերթապահության չեն ներգրավվում:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 149, մաս 4</b>				0,1	Տեսողական, փաստաթղթային	
38.	Հղի կանայք և մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողները ներգրավվում են տանը կամ կազմակերպությունում հերթապահության՝ միայն իրենց համաձայնությամբ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 149, մաս 4</b>				0,1	Տեսողական, փաստաթղթային	
39.	Պահպանվում են մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների հանգստի և սնվելու ընդմիջում տրամադրելու պահանջները:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 152, մասեր 1-5</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
40.	Մինչև տասնութ տարեկան աշխատողներին, որոնց աշխատաժամանակի տևողությունը գերազանցում է 4 ժամը, աշխատաժամանակի ընթացքում տրվում է հանգստի համար լրացուցիչ ընդմիջում՝ նվազագույնը 30 րոպե:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 153, մասեր 2, 4, 5</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	



41.	Աշխատողներին տրամադրվում են հատուկ ընդմիջումներ, եթե աշխատանքը կատարվում է պլյուս 40 աստիճան ցելսիուսից բարձր կամ մինուս 10 աստիճան ցելսիուսից ցածր օդի ջերմաստիճանային պայմաններում:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 153, մասեր 3-5</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
42.	Պահպանվում են մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների ամենօրյա անընդմեջ հանգստի տրամադրման պահանջները:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 154</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
43.	Հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները հանգստյան օրերին ներգրավվում են աշխատանքում միայն իրենց համաձայնությամբ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 155, մաս 6</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
44.	Մինչև տասնութ տարեկան աշխատողներին շաբաթվա ընթացքում տրվում է ոչ պակաս, քան երկու հանգստյան օր:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 155, մաս 7</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
45.	Հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին ներգրավվում են աշխատանքում միայն իրենց համաձայնությամբ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 156, մաս 2</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
46.	Ստույգ հաշվառվել է մինչև 18 տարեկան անձանց, հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց, երեխա խնամող աշխատողների, ինչպես նաև առողջության համար վնասակար և (կամ) վտանգավոր գործունեության ազդեցության պայմաններում աշխատողների օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակը:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 142, մաս 6</b>				1	Տեսողական, փաստաթղթային	
47.	Առկա են աշխատողին աշխատանքի ընդունման ժամանակ պահանջվող փաստաթղթերը՝							
47.1	տեղեկանք առողջական վիճակի մասին՝ մինչև տասնութ տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս.	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 89, մաս 1, կետ 4</b>				0,2	Փաստաթղթային	
47.2	ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի կամ խնամակալի գրավոր համաձայնությունը, եթե	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 89, մաս 1, կետ 5</b>				0,2	Փաստաթղթային	

	աշխատանքի է ընդունվում մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացի.							
47.3	կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, եթե աշխատանքային օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքը կապված է որոշակի կրթության կամ մասնագիտական պատրաստվածության հետ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 89, մաս 1, կետ 3</b>				0,2	Փաստաթղթային	
48.	Պահպանվել են աշխատողների նախնական բժշկական զննության անցկացման պահանջները:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 249, մաս 2, 5, 6</b>  ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 15-ի N1089-Ն որոշում, կետ 4, կետ 5, կետ 12				1	Փաստաթղթային	
49.	Պահպանվել են աշխատողների պարբերական բժշկական զննության անցկացման պահանջները:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 249, մասեր 2, 5, 6</b> ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 15-ի N1089-Ն որոշում, կետ 6, կետ 7, կետ 11, կետ 12				1	Փաստաթղթային	
50.	Կազմակերպությունում կամ կազմակերպության ստորաբաժանումներում վտանգ առաջանալու, ինչպես նաև կազմակերպության անվտանգության ապահովման և առողջության պահպանության ծառայության կամ աշխատողների ներկայացուցիչների կողմից աշխատանքի դադարեցման պահանջի առկայության դեպքերում գործատուն ձեռնարկում է միջոցներ աշխատողներին հնարավոր վտանգից պաշտպանելու համար:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 250, մասեր 1, 2, 3, 9</b>				1	Տեսողական փաստաթղթային	

51.	Աշխատողների տեղահանման պլանները փակցված են տեսանելի տեղերում:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 250, մասեր 5, 7</b>				0,5	Տեսողական	
52.	Կազմակերպությունում, որտեղ արտադրվում, օգտագործվում, պահպանվում են վտանգավոր նյութեր, առկա է հնարավոր վթարի կամ վտանգի մասին նախազգուշացնելու և հետևանքները վերացնելու համար գործողությունների պլան:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 250, մաս 6</b>				0,5	Տեսողական փաստաթղթային	
53.	Աշխատավայրում դժբախտ պատահարների կամ սուր հիվանդությունների առաջացման դեպքերում գործատուն աշխատողներին ապահովում է առաջին բժշկական օգնությամբ:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 256</b>				0,5	Փաստաթղթային	
54.	Արդյո՞ք մասնագիտական հիվանդությունները և դժբախտ դեպքերը հաշվառվում են և պատճառները պարզելու նպատակով անցկացվում է ծառայողական քննություն:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 261, մաս 1</b>  ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի N 458-Ն որոշում, Հավելված 1, Հավելված 2				1	Փաստաթղթային	
55.	Պահպանվել է մինչև 18 տարեկան անձանց ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում ներգրավելու արգելքը:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 257,</b>  ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2308-Ն որոշում Կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի 1698-Ն որոշում				0,2	Տեսողական փաստաթղթային	

56.	Պահպանվել է հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում ներգրավելու արգելքը:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 258, մաս 1</b>  ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2308-Ն որոշում, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի 1698-Ն որոշում				0,2	Տեսողական փաստաթղթային	
57.	Գործատուն պահպանում է հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կանանց անվտանգության և առողջության վրա ազդող աշխատանքի վնասակար պայմանների և վտանգավոր գործոնների ազդեցության վերացման պահանջները:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 258, մասեր 2, 3</b>				0,2	Տեսողական փաստաթղթային	
58.	Եթե աշխատանքային պայմանների փոփոխությամբ վտանգավոր գործոնների ազդեցությունը հնարավոր չէ վերացնել, ապա գործատուն հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կնոջը նրա համաձայնությամբ փոխադրում է այլ աշխատանքի նույն կազմակերպությունում կամ այդպիսի հնարավորության բացակայության դեպքում՝ տրամադրում է վճարովի արձակուրդ մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի հատկացումը:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 258, մաս 3</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
59.	Աշխատաժամանակի ընթացքում հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կնոջը, բժշկական հետազոտություն անցնելու համար, գործատուն նրան ազատում է աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով միջին աշխատավարձը:	<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 258, մաս 4</b>				0,2	Տեսողական, փաստաթղթային	

60.	<p>Երեխային կրծքով կերակրող կնոջը մինչև երեխայի մեկուկես տարին լրանալը, բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, երեխային կերակրելու համար յուրաքանչյուր երեք ժամը մեկ գործատուն տրամադրում է լրացուցիչ ընդմիջում՝ կես ժամից ոչ պակաս տևողությամբ, երեխային կերակրելու համար նախատեսված ընդմիջումների ժամանակահատվածում՝ վարձատրելով միջին ժամային աշխատավարձի չափով:</p>	<p><b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 258, մաս 5</b></p>				0,2	Տեսողական, փաստաթղթային	
-----	---	--	--	--	--	-----	-------------------------	--

**Ծանոթագրություններ**

**Նշում 1\*** - Շարժվող մասերով առաջացող ռիսկերից պաշտպանության միջոցների համար օգտագործվող պաշտպանիչ կամ ապահովիչ սարքավածքները ընտրությունը պետք է կատարվի՝ ելնելով ռիսկի տեսակից: Ընտրությունը հեշտացնելու համար կարելի է կիրառել՝

1) փոխանցիչի շարժվող մասրակներ

փոխահողորդակի շարժվող մասերի (փոկանիվ, փոկեր, ժանանիվներ, ձողավոր փոխանցիչներ, իլեր և այլն) ներգործությանը ենթարկվող անձանց պաշտպանության համար նախագծված պաշտպանության միջոցները պետք է լինեն՝

ա) հնարավորինս ամրակապված՝ սույն տեխնիկական կանոնակարգի 34-րդ կամ 35-րդ կետերով նախատեսված պահանջներին համապատասխան,

բ) շարժուն՝ սույն տեխնիկական կանոնակարգի 34-րդ կետով կամ 36-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջներին համապատասխան:

Շարժուն պաշտպանիչ միջոցները պետք է օգտագործվեն այնտեղ, որտեղ նախատեսված է մեքենային հաճախակի մոտենալը.

2) անմիջապես գործընթացի մեջ դրված շարժվող մասեր՝

աշխատանքին մասնակցող շարժվող մասերով (օրինակ՝ կտրող գործիքը, մամլիչների, գլանների շարժվող մասերը, մշակվող մասերը և այլն) առաջացող ռիսկերի ներգործությանը ենթարկվող անձանց պաշտպանության համար նախատեսվող պաշտպանիչ կամ ապահովիչ միջոցները պետք է՝

ա) այնտեղ, որտեղ հնարավոր է, լինեն ամրակապված՝ սույն տեխնիկական կանոնակարգի 34-րդ և 35-րդ կետերի պահանջներին համապատասխան,

բ) այլ դեպքերում առկա լինեն նախապաշտպանական գործուն միջոցներ՝ սույն տեխնիկական կանոնակարգի 34-րդ կետով և 36-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պահանջներին համապատասխան կամ զգայական նախապաշտպանական միջոցներ (ոչ նյութական փակոցներ, զգայուն մամլամայրեր և այլն), գործարկուի կամ նրա մարմնի մասերի վտանգավոր գոտում հայտնվելն ավտոմատ կերպով կանխելու համար նախատեսված միջոցներ՝ սույն տեխնիկական կանոնակարգի 34-րդ և 38-րդ կետերով նախատեսված պահանջներին համապատասխան:

Եթե գործընթացում որոշակի շարժվող մասեր չեն կարող շահագործման ժամանակ լիովին կամ մասամբ պաշտպանված լինել դրանց մոտենալուց, երբ գործողությունը պահանջում է գործարկուի միջամտությունը, ապա այդ մասերը, որտեղ տեխնիկապես հնարավոր է, պետք է հանդերձված լինեն՝

սևեռված (ամրակապված), սույն տեխնիկական կանոնակարգի 34-րդ և 35-րդ կետերով նախատեսված պահանջներին համապատասխան, պաշտպանիչ սարքավածքներով, որոնք կանխում են մուտքն աշխատանքի մեջ չօգտագործվող հատվածամասերը,

շարժական, սույն տեխնիկական կանոնակարգի 34-րդ և 37-րդ կետերով նախատեսված պահանջներին համապատասխան ամրակապող սարքավածքներով, որոնք սահմանափակում են մոտենալը շարժվող մասերի այն հատվածներին, որոնք նախատեսված են անմիջապես գործի դնելու համար:

Մասնավորապես՝

34. Պաշտպանիչ և ապահովիչ սարքվածքների բնութագրերը

Պաշտպանիչ և ապահովիչ սարքվածքները պետք է՝

ա) ունենան ամուր, կայուն կառուցվածք,

բ) չառաջացնեն լրացուցիչ ռիսկեր,

գ) չլինեն հեշտ հաղթահարելի,

դ) տեղադրված լինեն վտանգավոր գոտուց համապատասխան հեռավորության վրա,

ե) չխանգարեն ամբողջ արտադրական գործընթացը դիտելուն,

զ) թույլատրեն կատարել գործիքի կարգաբերման և (կամ) փոխարինման, ինչպես նաև ընթացիկ սպասարկման հիմնական անհրաժեշտ աշխատանքը՝ սահմանափակելով մուտքը միայն դեպի այն մասերը, որտեղ պետք է աշխատանք կատարվի՝ հնարավորության սահմաններում չապամոնտաժելով պաշտպանիչ և ապահովիչ սարքվածքները:

Անշարժ, շարժական, մուտքը սահմանափակող կարգավորելի պաշտպանիչ և ապահովիչ սարքվածքներին ներկայացվող պահանջները

35. Անշարժ պաշտպանիչ սարքվածքները պետք է տեղում անվտանգ ամրակապված լինեն: Դրանք պետք է ամրակապվեն այնպիսի համակարգերի օգնությամբ, որոնք կարող են բացվել միայն գործիքի օգտագործմամբ: Հնարավորության սահմաններում պաշտպանիչ սարքվածքը տեղում չպետք է մնա առանց ամրակապման:

36. Շարժական պաշտպանիչ սարքվածքները լինում են Ա և Բ տիպերի՝

1) Ա տիպի շարժական պաշտպանիչ սարքվածքները պետք է՝

ա) հնարավորության սահմաններում ամրակապված մնան մեքենայի վրա, երբ դա բացված է,

բ) փականի հետ կապ ունենան՝ կանխելու համար շարժվող մասերի գործարկումն այն ժամանակ, երբ այդ մասերը բացված են մտում.

2) Բ տիպի շարժական պաշտպանիչ սարքվածքները կառավարման համակարգում պետք է նախագծված և ներառված լինեն այնպես, որպեսզի՝

ա) շարժվող մասերը չմիանան, քանի դեռ դրանք գտնվում են գործարկուի հասանելիության գոտում,

